491.09
Ц-50

93

04 MAY 2010 310

Études de dialectologie arménienne

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԲԱՌԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Գրեց

ՀՐԱՉԵԱՑ Ճ. ԱՃԱՌԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՏՐ ԱԹՈՌՈՑ Ս ԷՋՄԻԱԾՆԻ

1901

1899թ.

21.990

Ա-50

396

Études de dialectologie arménienne

990

50

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԲԱՌԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Գրեց

ՀՐԱՉԵԱՑ Ց. ԱՃԱՌԵԱՆ

(Առտատպուած 1899 թ. «ԱՐԱՐԱՏ»-ից)

ՀՐԱՄԱՆՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1899

Дозволено Цензурою 25 Сентября 1899 г. г. Тифлисъ.

ԵՊՀ-ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ЗУОЛ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
16823-58

Գ.

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗСՍՌ-Арм ССР
Ա. ԱՄ, А. Мясникяна
ԱՆՎԱՆԻ

Ծառաչարան

Հայկական բարբառախօսութեան առաջին երկու հատորներով խօսելէ վերջ Ասլանբէգի [1]) և Սուչաւայի [2]) բարբառներուն վրայ, ներկայիս կ'անցնինք Վարաբաղի բարբառին քննութեան:

Անծանօթ մնացած բարբառ մը չէ Վարաբաղի բարբառը. ընդհակառակը՝ Տփղիսի բարբառին հետ՝ գրականութեան ամէնէն աւելի ծանօթացած հայ բարբառներէն մէկն է. այս բարբառով գրուած աշխատութեանց ամբողջութիւնը կարող է փոքրիկ մատենագրութիւն մը կազմել. յիշենք ի մէջ այլոց հետեւեալ աշխատութիւնները. Մակար վ. Բարխուդարեանց, Պըլը — Պուղի, Թիֆլիս, 1883. — Ուստայ Գէորգ Բարխուդարեանց, Արազը տարին կտարի. Շուշի. 1883.—Նոյն.

---

1. Քննութիւն Ասլանբէգի բարբառին. Վաղարշ. 1898:

2. Քննութիւն Սուչաւայի բարբառին. տես Բազմավէպ Մատս, Մայիս եւլն:

Զօրան ու նշանածը. 1896. Տփղիս.—Կ Մաքսիմ Շահնազարեանց. Վերջեկ կնանոց պընը փէշակը. Շուշուայ կանանց կեանքիցը. Տփղիս. 1882.—Նոյն. Տմբլաչի խաչան. Շուշուայ ղալին խէրն ու շաուը. Տփղիս. 1887.—ԵՒլն, առանց նկատի առնելու այն փոքր յօդուածները՝ որ այս ու այն ազգային Թերթի (Մանանդ Նոր—Դարի) մէջ հրատարակուած են։

Դժբախտաբար, թէև այս բարբառին երեք ընկերակիցները, այն է Ագուլիսի [1]), Տփղիսի [2]) և մինչև իսկ Ախալցխայի [3]) բարբառները նաև մանրամասնօրէն քննուած և ուսումնասիրուած են, սակայն ասոնց հակառակ ո՛չ մի ամբողջական աշխատութիւն հրատարակուած է Ղարաբաղի բարբառին քննութեան համար,—Այս նիւթին վերաբերեալ կան արդարև մի քանի փոքրիկ յօդուածներ,

---

1. Ագուլեցւոց բարբառ. Ս. Սարգսեան. Պոլսոյ. 1883:

2. *Историч. Грамм. соврем. Арм. Языка гор. Тифлиса, А. Томсонъ.* Петербургъ. 1890.

3. *Лингвистическія изслѣдованія, — Краткій очеркъ фонетики и морфологіи ахалцыхскаго говора. А. Томсонъ.* Петербургъ. 1887:

ինչպէս Մ. Վ. Բարխուդարեանցի Պոլը—Պուղի անուն աշխատութեան սկիզբը դրուած մի քանի էջ քերականական ծանօթութիւնները, Ղ. Աղայեանցի՝ «Ո տառի հնչիւնը Ղարաբաղի բարբառում» յօդուածը Տարագի անցեալ տարուան 48 թուին մէջ (էջ 1090) և լն., բայց ասոնք չեն կարող ի հարկէ Ղարաբաղի բարբառին ամբողջական ուսումնասիրութեան մը տեղը բռնել։

Ջանացինք մեր ներկայ աշխատութեամբ՝ որչափ որ մեր կարողութիւնը կը ներէր՝ լնուլ այս թերին. աշխատութեան մեծագոյն սատարն և ձեռնտուն գտնուեցաւ ս. Էջմիածնայ վանուց միաբան Ընորհ. Հ. Եսայի սարկաւագ Մահտեսի Բարայեան՝ մեր ազնիւ և սիրեցեալ բարեկամը, որ յատկապէս մեզ համար աշխատութիւն յանձն առաւ կազմելու Ղարաբաղի բարբառին բառարանը. որուն համար պարտք կը համարեմ հրապարակաւ շնորհակալութիւնս յայտնել հոս։ Օգտուեցանք նաև մեր վերը նշանակած աշխատութիւններէն։

Աւելորդ է ըսել թէ մեր ներկայ հատորն ևս կազմուած է ճիշտ այն գրութեամբ և ոճով՝ ինչպէս իր երկու նախորդները։

ՀՐԱՉԵԱՅ Յ. ԱՃԱՌԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՁԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

(Phonetik)

Ղ.ԱՐԱԲԱՂԻ բարբառին ձայնական դրութիւնը կը պարունակէ ընդ ամէնը 46 ձայն, որոնցմէ 10 ձայնաւոր, 3 երկբարբառ, և 33 բաղաձայն։

1. Ձայնաւորներն են.

ա. ո. է. ը. ըէ. ի. օ. ու. էօ. իւ.

2. Երկբարբառներն են.

էյ. օյ. ուա.

3. Բաղաձայններն են.

բ. գ. գյ. դ. զ. թ. ժ. լ. խ. ծ.
կ. կյ. հ. հյ. ճ. ղ. ճ. մ. յ. ն.
շ. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց.
փ. ք. քյ.

Այս տառերը կ'արտասանուին հետեւեալ եղանակով.

1. Ձայնաւորներ.

ա=a

Այս տառը կը հնչուի սովորական հնչումով և միջակ բացութեամբ. ոչ այնպէս գոց ինչպէս Ասլանբէգեան, Վանեցոց և Ներ. ա-ը. օր. ազն՝ ազգ. ախտալոք՝ աշխատիլ. անջուռ՝ ականջ. ընտշուել՝ աշխատիլ. բըչէղան՝ կաչաղակ. տանը՝ տան:

Թէ բառին սկիզբը և թէ բառի մէջ՝ շեշտէ առաջ չկրնար գտնուիլ. եթէ օրինակները ցուցին կը պատկանին. օր. առօթնարան, բայց բառն ըղօթնարան. ըղաչանք կամ ղաչանք՝ աղաչանք. սըկաւակաղը՝ տրկաւագ. սըղանայ՝ սաստկանայ. բան այամ եռավանկ բառ մը իր առաջին վանկին մէջ, և քառավանկ բառ մը իր առաջին և երկրորդ վանկերուն մէջ չեն կրնար ա ձայնն առնել:

Ա ձայնը բառին վերջը հոգնաւորեալ է. եթէ օրինակներն են՝ ըղուխթանա՝

առաւօտուն. ամէնուն բանիլայ. խօխան հրախայ. թաւ թէ, պի, ու. հունց թաւ ճոց թէ, ինչպէս. մուտնան ճառանդ. չօխան չուխայ. ըէղունան պիտի (ապառնիի մաս-նիկ). աղուանա առաւոտայ. վրկաւ վկայ. յղուայ (կարգաւ եղուայ) ի վերայ. փըէ'սան փեսայ. տղայ տղայ. այնա այդ տղայ:

—

$$m = ä$$

Այս ձայնը ա և է հնչուածներուն մէջ առաջին տեղի ձայնն է՝ որ յաճախ է նաև արդի ուրիշ բազմաթիւ հայ բարբառնե-րու. ինչպէս Մարաշի, Վանայ, Ալ-նիոյ, Ամասիոյ, Ագուլիսի, Ոզմեցոց և ն. բայց մանաւանդ արևելեան թուրք բարբառներուն և քրդերէնին հոլովին կը պահէ Պօլսոյ ինչպէս հայոց, նայ-պէս և Թրքաց լեզուին մէջ:

Այս ձայնը առհասարակ նշանակ-ուած է էա ձևով ինչպէս է օրինակ

Զէյթունի բարբառին քննութեան [1]) մէջ
եւն. առաջին անգամ Ս. Սարգսեան
Ագուլեցոց բարբառին քննութեան մէջ
գործածից նորահնար ձեւ մը՝ այն է ա
երկու կէտով (tréma). այս ձեւը լեզուա-
բանութէն թէեւ շատ յարմար էր ու մա-
նաւանդ Եւրոպական ä-ին ալ շատ մօտ,
բայց տպագրական տեսակէտով ոչ այնքան
գեղեցիկ: Աւելի յարմար է շրջեալ տ
ձեւը՝ զոր առաջին անգամ բոլոքական
միսիոնարները մտածած և իրենց հրա-
տարակած քրդերէն հայատառ Աւետա-
րանին մէջ ևս գործածած են: Այսոյն
ձեւը գործածել սկսած է այժմ Պօլսոյ
Բիւրակն լրագիրը (տես ներկայ տարուան
էջ 21, 388). մեր բարբառախօսական
քննութեանց մէջ մենք ևս կ'ընդունինք
և կը գործածենք այսուհետեւ այս ձեւը:

Չարութեան բարբառին մէջ տ հըն-

---

1) Ուղիխա կամ Չէյթուն. Յ. Ս. Պահկիերեան. Պօլիս. 1885:

Հիանը առնի բառի մէջ յաձախութիւն է. օր. կո՛ծոլ՝ կայծակ. կսրոթ՝ կարապ. չո՛մին՝ չամիչ. լոլ՝ լաւ։— Քիչ անգամ կը պատահի բառին սկիզբը. եղած օրինակներն են. ո՛նգիւն՝ կոզմ (կուզայ գլուխ. անկիւն ձևէն). ո՛նկին՝ անգին, թանկագին քար. ոստիջան՝ աստիճան. ո՛լթոլ՝ ալտար. ո՛րիւն՝ արիւն։ — Հապաւած է բառի վերջ. ուր կը պատահի գիւղաւ՝ գուլպայ և լիսանդոյո՛՝ լուսին, լուսնակայ բառերուն մէջ միայն։

է = e

Միջին բացաւթեամբ հնչուած. Ֆրանսական é և è ձայներուն միջաեղոնոյն է Պօլսեցոց և ուրիշ բարբառներու սովորական է-ին հետ. օր. շէ՛լէթ՝ շաբաթ. հօ՛րէքյ՝ ուրագ. կիւտէմըն՝ կոտեցիս. կըէ՛ոէքյ՝ կեռնիք, ակռայ. կճէ՛ղան՝ կճղակ։ — Բառին թէ՛ սկիզբը և թէ վերջը է աւելի յաձախութեամբ է Հարաբարի բար-

բառին, քան թէ հին հայերէնի մէջ՝ ուր վերջատառ է բառ մը հայերէն չէ. տես այս մասին Բազմ. 98, էջ 221 բ։ Օր. էվիլ՝ աւել. ծէխէ՝ ձախ. թըմըտուռնիկ. էյ՝ ես. խսիէ՝ խոտ եւլն։

ը=ə

Սովորական հնչումով. երբեմն առաջին կը հնչուի այնպիսի թուլութեամբ մը՝ որով շատ բաց էօ ձայնին կը մօտենայ. Ղարաբաղցոց ճիշտ այս հնչումն ունի ֆրանսական le յօդին e ձայնը՝ փարիզեցոց արտասանութեամբ. օր. սըլկըմ՝ աւրկևիլ. սիսէռնը՝ սիսեռն. հընգէռ՝ ընկեր. ալըևի՝ բլիթ. ալիւթնը՝ բոյթ, բթամատ. ալըհնա՝ բրինձ. ըհշամըղէլ՝ աշխատել. ըղօթէլ՝ պօթել։

Այս ձայնը անհամեմատ աւելի յաճախադէպ է Ղարաբաղի բարբառին, քան գրաբարի մէջ. ինչպէս որ վերը տեսանք արդէն եւ յետոյ աւելի ընդարձակօրէն ալ

պիտի առանձնենք, շեշտէ առաջ գտնուած ա-ձայնը (նոյնպէս առիթ ձայնաւորներ) կը վերածուի ը-ի. ն վերջացող բառերէն շատերը՝ որոնք ուրիշ բարբառներու մէջ կը կորսնցնեն այդ ն-ն (համմա. մատ, ոտք, ծունգ եւլն) կամ առ առաւելն ը-ի կը վերածեն զայն, (համմա. ինը, տասը, եօթը), Ղարաբաղի բարբառին մէջ ո՛չ թէ միայն չեն կորսնցներ այդ ն ձայնը, այլ նաեւ նորամուտ ը մը կ'աւելցնեն անոր վերջ. օր. հանդիմանը՝ հարան. մնանը՝ մատն. նօռնը՝ նուռն. վըէնը՝ ոտն. ծօյնը կամ ծօնգյնը՝ ծունգն եւլն։

ը է = է՝

Այս ձայնը նոյն է ֆրանսական é-ին հետ. որչափ որ ինձ ծանօթ է, չ'գտնըուր ուրիշ հայ բարբառներու մէջ և կը թուի թէ Ղարաբաղի բարբառին միայն առանձնայատուկ ձայն մըն է. օր. վըէնը՝ ոտն. կանդնըէ՝ կացնի. մըէծծ՝ մեծ.

վէ՛սկըէո՝ ասկր. վէց՝ պրձ. տըէնդ՝ տեննդ։

Ինչպէս օրինակներէն կ՛երևայ, ըէ կարող է գանուիլ բառին թէ մէջը և թէ վերջը. բայց բնաւ բառին սկիզբը։

Աւելորդ է ըսել թէ ըէ (ը և է տառերով) երկբարբառ մը չէ. մենք այսպէս նշանակեցինք ապագրական դիւրութեան համար. բայց այսմ հետևանալ միշտ է-ին վրայ դնել պէտք է։

i=հ

Նոյն է ուրիշ բարբառներու հ-ին հետ. ամէն դիրքի մէջ ալ կրնայ գանուիլ. օր. հին՝ հայելի. հինգ՝ հոգի. հուհ՝ հուպ. հոհ՝ հոէ. վհատ՝ վոջիլ. ցհոէկ՝ ցեղակ. հնանը՝ լուն. հնալը՝ լունքն ալն։

o = o

Նմանապէս ուրիշ բարբառներու օ ձայնին հետ նոյն է. օր. օ՝ բառի մէջ.

խօրմիտը՝ խոսքն. Թօխս՝ Թուխս. Թօխ՝ Թուխ. ւմրօճ ւմնէլ՝ պրոճալ. ցօրէն՝ ցորեան. փրփիօր՝ փրփուր ևլն:

Բառին ակիզբը առաւօտ թեամբ կը գտնուի. օր. օխցը՝ օճ. օքուէթ՝ օգուտ. օժ՝ ոյժ. օնջ՝ ծուխ մուր, երկաթի ժանգ, (=միջին հայերէնի ունջ՝ ձանձախտարիթ. Ոսկիփոր.) օյնը՝ ուռկան, ամանի անցք. օղ՝ օղտ. օշտի՝ վիշապ:

Բառին ծայրը հազուադէպ է. երկու հետեւեալ օրինակները կան միայն. կծօ՝ կծու. Թթօ՝ թթու:

ու=ս

Սովորական ու հնչումով՝ որ Ղարաբաղի բարբառին մէջ շատ յաճախ պատահող ձայն մը չէ. այս հնչումը մեծ մասամբ կը գտնուի բառի մէջ. օր. հմոլուլ՝ խաղող. հուղուլ՝ ուղեղ. ինցուն՝ յիսուն. հնուհմովուր՝ հնոտիհաւուր: Իսկ բառի ակիզբը և վերջը սակաւագիւտ է. եզած օ-

բնականները հետևեալներն են. ուխտումնասուն՝ եօթանասուն. ունայր՝ յուսադ. ուշունց՝ յիշոց, հայհոյութիւն. քու՝ քո. հոլ՝ ծվ. հէրու՝ հերս, անցեալ տարի. կուկու՝ կկու. կանու՝ կատու. խաչու՝ խաշոյ. էրկու՝ երկու. տու՝ դու. սուռ՝ առու, առուակ:

էօ=ö

Գերմանական ö ձայնն է, որ նոյն է նաև Զոկերու, Զէյթունի, Ասլանբէգի էօ ձայնին հետ, բայց Ղարաբաղի էօ-ն առնչմէ քիչ մ՚ աւելի բաց կ՚արտասանուի, մօտ իբր էօա կամ էօէ. այսպիսի հնչուամ մ՚ ունին Ասլանբէգի, Շէդոկիոյ և Վանի բարբառները. առաջնոյն մէջ շեշտեալ էօ կը հնչուի իբր էօա, ուր մինչև իսկ ա ձայնը յայտնի կը լսուի. տես Քնն. Ասլ. բարբ. էջ 9: Վանի բարբառին մէջ լսընծոր, ղժուխք, թոք եւլն բառերուն ո ձայնը Ասլանբէգցոց շեշտեալ էօ-էն աւելի գոց է: Շէդոկիոյ բարբառին ո-ն բոլորովին

նոյն կը թուի Ղարաբաղցոց էօ-ին հետ [1]։

էօ շատ սովորական չէ Ղարաբաղի բարբառին մէջ. ի տեղւ կը նշանակենք բոլոր գանուած օրինակները.

Բառի սկիզբը.—էօլիմ՝ ուրբաթ. էօրհշ՝ ուրիշ. էօգիլ՝ ուզել։

Բառի մէջ.—Զէօխ՝ ապուխ. խէօզ՝ խոզ. խնձէօր՝ խնձոր. տէօղ՝ դող. տղատէօղաղ՝ դողդոջալ. քթէօլ՝ գլել, գալ. կուէօխ՝ գլուխ. կյէօղ՝ գող. ղէօրթ՝ ուղղուիլ, ձիշտ, սաղպ. ծէօղ՝ ձոր. շէօղ՝ շոր, լաթ. շուէօղ՝ շուրջ, սալտ. հրուէօրէլ՝ ոլորել. հէօլ՝ ուլ. ալուէօղ՝ պղտոր. հէօղք՝ հոտ. քէօն լինիլ՝ քնել, ննջել (քուն առնել). կծէօխուր՝ կոճղոխուր։

---

1 Եւդոկիոյ այս ձայնին վրայ՝ որուն ակաձայնաւոր եղած եմ, տես Պր. Յովհ. Գազանճեանի, Հանդէս 1898, էջ 100. բ. միւն, ուր այս ձայնին իբր ծագաւոր հնչում կը նշանակուի ոէ, օէ. Նոյն էջ ծանօթ. 2 կ'ըսուի թէ «Ո-ի այսօրինակ հնչումն առնչի բնիկաւոր եւ բնորոշ է Սեբաստիոյ բարբառին մէջ։»

Բառի ձայն է ձայնը չի պատահել։

իւ=ü

Այս ձայնն ալ Ազանբէգի, Զոկեբէնի, Զէյթունի իւ ձայնին նման է, իբր գեր-մանական ü, բայց ատոնցմէ աւելի նուրբ և փափուկ կը հնչուի. զոր կարելի է նշանակել իւյու, իյու խառնդով. օր. լիւ, հնչել լիւյու կամ լիյու, բայց ոչ իբր երկբարբառ, այլ միահնչիւն ձայնաւոր։

Այս ձայնը աւելի բառի մէջ կը պատահի. օր. ալիւլիւր՝ բոլոր կլոր. ծիւն՝ ձիւն. կիւտիլ՝ կուտալ և ն։ Բառի սկիզբը կայ միայն իւրիւգիւն կամ ըրիւգիւ՝ երեկոյ, իւրթիւմը՝ երդուածն, իւր՝ իբր, իւրան՝ իբրեան բառերուն մէջ։ Բառավերջի իւ ուղին հետևեալները. ծիւ՝ ձու. լիւգիւ՝ լեզու. լիւ՝ լու. իւրիւգիւ կամ ըրիւգիւ՝ երեկոյ (մլ.)։

իւ ձայնը երբեք պէտք չէ կարդալ իվ։ Դիտ.—Ինչ որ ըսած ենք ա գլխին

հնչման մասին բազմավանկ բառերու մէջ, կը վերաբերի նաև միւս ձայնաւորներուն։

2. Երկբարբառները.

Երկբարբառները՝ որոնք այնքան առատ էին հին հայերէնի մէջ, նեղկայ բարբառներուն մէջ առ հասարակ ջնջուած են, վերածուելով ձայնաւորէ և բաղաձայնէ բաղկացած վանկերու. այսպէս հին եւ երկբարբառը այժմ ամէն տեղ կը հնչուի յէվ (կարդա yev) կամ էվ, իբր առանձին առանձին է և վ ձայներէն բաղկացած վանկ մը. նոյնպէս ուա եղած է ուվա, վա կամ ույա ևն։ Մեր ականաւոր հայ բարբառներուն մէջ միակ բացառութիւն կը կազմէ Սուչավայի հայ բարբառը՝ որ շատ հարուստ է (գերմանական ազդեցութեամբ) երկբարբառներու կողմէ. տես ջնն. Սուչավայի բարբ. Գլ. Ա։

Թէև ո՛չ Սուչավայի բարբառին չափ

հարուստ, բայց երեք տրոշ երկբարբառներ ունի Ղարաբաղի բարբառն ալ. էյ oյ և ուա. առնչվում առաջինը հին հայերէնի էի ձևն և Ղարաբաղի մէջ յետնաբար ձևացած ձայն մըն է. նոյն է եւրոպական ey կամ ei ձայնին հետ. օր. ղէյնը՝ եղունգ. հրամանէյնդ՝ հարստանիք. կամէյդ՝ կաղ, կաղլիկ ևլն։ Երկրորդը գրաբարի ոյ երկբարբառն է, բայց ծագումով տարբեր. այս ձայնը կը գտնուի ծօյնը՝ ծունգն, կօյնը՝ կրունկն, օյնը՝ ունկուն, անգիլ ամանի և սօյնը՝ առնգն բառերուն մէջ. կ'արժէ եւրոպական oy կամ oi։ Երրորդը գրաբարի ուա երկբարբառն է՝ որ այս բարբառին մէջ (թէև ոչ միշտ) անխոփոխ պահուած է. օր. թթուաւր՝ թթուաշ. թթուանալ՝ թթուիլ, թթու լինել. հուանդ՝ հուան. փըտուանալ՝ բուրուած. ատոնց մէջ ուա պէտք չէ բնաւ կարդալ վա՝ ինչպէս նոր գրական բարբառներուն մէջ, այլ ճշտիւ ու—ա՝ նոր գրական ua։

3. Բառաձայնները.

Երկար չափի ըլլայ բաղաձայններուն բացատրութիւնը, որովհետև բոլորն ալ առհասարակ ունին Ռուսահայոց (մասնաւորապէս խօսելով Տիղիսեցոց) յատուկ արտասանութիւնը։ Առանձին արտասանութիւն ունին գ, կ, հ, ք՝ որոնց, ինչպէս և միւս բաղաձայններուն համապատասխան եւրոպական ձևերն ու օրինակները կը դնենք ստորև համառօտութիւն։

Առնց մէջ նկատելի գլխաւոր կէտն այն է, որ հայերէնի ը, գ, ղ, ձ, ջ ձայնները Ղարաբաղի բարբառին մէջ սովորաբար կը վերածուին ա, կ, տ, ծ, ճ-ձայնների, որով հնչականութիւն խօսքը չափազանց նուազած է այս բարբառին մէջ. չենք ուզեր ըսել թէ նոյն հնչականները բոլորովին անծանօթ մնացած ըլլան առնց, այլ պահուած են միմիայն մասնաւոր դիպքերու մէջ և այն առհա-

սուրբ ոգւոյն ճամբով։ Ղարաբաղի բարբառը բառը ըստ իր ձայնական դրութեան կը պատկանի մեր կազմած ձայնախօսական առաջին խումբին (տես Քնութ. Սուրբ Հավայի բարբառին գլ. Ա.)։ բայց հնչականներու այս փոփոխութիւնը պատճառ է որ Ղարաբաղի բարբառը շուտով անջատուի այս խումբէն և առանձին անկախ ձայնախօսական դրութիւն մը կազմէ [1]):

$$n = b$$

բ միատճ լինելով հետզհետէ ջնջուելու, Ղարաբաղի բարբառին հազուադէպ ձայներէն մին է. կը պատահի միայն 25 բառերու մէջ՝ որոնց ցանկը կը դնենք ի տորև։ Այս բառերուն մեծ մասը կամ թրքերէնի ազդեցութեամբ է (հմմտ. մարդ, թրք. ադամ

---

[1]) Այս ընթացքին կը հետեւի նաեւ Վանայ բարբառը. այս մասին աւելի ընդարձակ խօսելը կը վերապահեմ Վանայ բարբառի քննութեան, որ արդէն մասամբ պատրաստ է.

ամբոխ. ունմբ [1]՝ յունադ. Թրք. ևս ունմբ) և կամ ձայնահաւասական պատճառնելէ տախտուած. այսպէս մ ձայնէն վերջ եկած բ ձայնելը։

բ ունեցող բառերն են. ամբար՝ հատ-բաղադանոց. անբ՝ ամպ. աբաշխարհել՝ ապաշխարել. աբրիշում՝ աբզում. բախս՝ հմ. պէմբակ՝ բամբակ. պամբասանմբ՝ բամբասանք. բմխշիլ՝ բաշխել. բեղ՝ պեվ, բեվ, ընչացք. գիւղբա՝ գուղբայ. բրդի՝ գէպի. բէղբմա՝ պիտի, պէտք է. յերիսկնպօս՝ եպիսկոպոս. հիբ՝ երբ. հիբը վրէր՝ երբ որ. տրմբրէլ՝ թմբլել, թմբլլել. թունբ՝ հմ. լնբի՝ լուբիա. խորթուբնրբ՝ հմ. կյո՛մբիւր՝ կարմիր. հրմբարէլ՝ համարել, հաշուել. ունմբ՝ յունադ. ղրբնաստրակ՝ նապաստակ. շէբեր՝ շաբաթ. վրթնրէդ, վրժնրէդ՝ վարդապետ, վարժապետ։

Այս բառերուն մանրամասնութեանց վրայ կը խօսինք երկրորդ գլխուն մէջ։—Ր կը համապատասխանէ գրաբարի բ և պ ձայներուն. է նաև թարմատար։

---

[1]) Այս բառին շեշտն ունի ապացոյց ի բրմական փոխառութեան։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

q=g

բ-ին բաղնատակից է գ՝ ոը նոյնպէս հետ-
զհետէ կ-ի կը դնմէ. վերջինին նման պատ-
ճառներով դեռ անվստահ պահուած կամ
ուրիշ ճամբով յառաջացած գ ձայնը Ղարա-
բաղի արդեան բարբառին մէջ կը դանուի
լոկ հետևեալ 17 բառերուն մէջ:

Ա՛գահ՝ հմ. ակռուձ կամ ակռուգ՝ ակռանջ.
ո՛ւգիւն՝ անկիւն. ուրունգ՝ արմուկ. փրգիկնդան՝
բարեկենդան. գիդոլ՝ գնաել, գնանալ. գիւրգ՝
գերկ. գիւղրտ՝ գուլպայ. ըրիւգիւ՝ երեկոյ.
յէրգինէյ՝ երկինք. յէրգիր՝ երկիր. հրնգեր՝ ըն-
կեր. խօնգ՝ խաւնկ. գյըրէգի՝ կնաբարկէ. մրգըրդել՝
մկրտել. նո՛րգիզ՝ նարկիզ. ցնգել՝ տնկել:

Ղարաբաղի բարբառին գ ձայնը հա-
մապատասխան է հին հայերէնի գ և կ ձայ-
ներուն:

qյ=gy

Այս ձևը ի՛արտասանուի ճիշտ գըը-
ուածին պէս. նոյն է Վանեցոց, Ոզմեցոց,
Զոկեցոց, ինչպէս և Խարբերդի բարբառին
գյ ձայնին հետ. որ եւրոպական բառով կը
կոչուի g yodisé, այսինքն յ կիսաձայնն առա-

ցած ց։ Գ ձայնին պէս այս ալ շատ սուղ-
բաւական չէ Ղարաբաղի բարբառին մէջ. ուր
հեռաւեալ ձևերուն մէջ միայն գոյութիւն
ունի։

յեղնիկեգ՝ ազաւնի. ախճիգ՝ աղջիկ. պէ-
պեգ՝ բոբիկ, բոկոտն. կյէնգյաս՝ գանգատ.
յէրեգ՝ եղէկ. գունգ՝ գանգակ. գէտեգ՝ գատիկ.
թանգ՝ թանգ, սուղ. ժմոռնգ՝ ժառանգ. ինիգ՝
էլիկ, եւ. ինգը՝ էն, էնք, էնքը. ինանգյո՝ էս-
ալն, էսանկայ. ծմոռեգ՝ ծաղիկ. ծնգյնը՝
ծառնգն. կնրեգ՝ էլեն, էնիկ. գյնրէգի՝ կնբանէկ.
կծրեգ՝ էծիկ. կմռզիգ՝ էսուլ. հենգ՝ հէնգ. ճոնգ՝
ճանկ. նրվրկմատեյգ՝ նաւակատունք. շեյգ՝ շէկ.
սնգյնը՝ սունկ. կմոդեյգ՝ էսպ. գիւրգ՝ գլուխ։

Ղարաբաղի բարբառին գ ձայնը կը համապատասխանէ հին հայերէնի գ, կ, ք ձայներուն։

$$ղ = d$$

Հին հայերէնի դ ձայնն ալ Ղարաբաղի բարբառին մէջ մնաած լինելով նաև տ-ի վերածուելու, դ-ի թիւը շատ նուազած է. և կը դանուի մնայն հեռաւեալ բառերուն մէջ.

Ա՛խկատ՝ աղքատ. հոնգ՝ անգ, արտ. ջնդոկ՝ այնտեղ, անգ, հոն. ընդհանուր՝ աշխատել. փղրգինդան՝ բարեկենդան. գիտալ՝ գիտել, գիտենալ. դաղատմանի՝ գատաստան. դեվ՝ գև. բղի՝ դէպի. բիւնդ՝ թունդ, խիստ. ջնդեր՝ լինդ. խմրդախ՝ հմ. ծմնդր՝ ծանր. ծծնդր՝ ծուռը. մղգրդել՝ մկլտել. պադարամ՝ պատարագ. պրեանդ՝ պինդ. բհղրմա՝ պետի, պէտք է. սմնդուղ՝ սանդուխ. սմնդր՝ սանտը. սղդմնա՝ սատանայ. վրթմբեդ՝ վարդապետ. վրժմբեդ՝ վարժապետ. տրեանդ՝ տենդ. ֆմնդիլ՝ քանդել. փշադ՝ փշատ. փոդ՝ փայտ։

Ասոնց մէջ ալ Ղարաբաղի բարբառը դ կը համապատասխանէ գրաբարի դ, տ ձայներուն. է նաև թարմատար։

զ=z

Օր. զհեգ՝ գաւաթ. զհմրէ՝ զոքանչ. բօզ՝ թուզ. խեօզ՝ խոզ. կղզիլ՝ գզել։ Առհասարակ գրաբարի զ-ին կը համապատասխանէ. երեք օրինակի մէջ նաև ծ, ձ, ս ձայներուն, զորոնք տես իր կարգին։

թ=th

Օր. բրօ՝ թթու. բօբ՝ թութ. բբուռչ՝ հմ. բհբիվ՝ թեթև ևլն։

Սովորաբար կը ծագի գրաբարի թ ձայնէն. բայց խառմը մը բառերու մէջ կը համապատասխանէ նաև հին հայերէնի ս, դ, ձ, ա, հ ձայներուն։

ժ=z'

Օր. խնժոյր՝ խէժ. տրժիր՝ դժուար. ժիմ՝ ժամ, ժում ևլն։

Ընդհանրապէս հին հայերէնի ժ ձայնէն կը ծագի. մէկ քանի դէպքերու մէջ կը համապատասխանէ նաև գրաբարի ճ և շ ձայներուն։

լ=l

Օր. լեռ՝ լայն. լո՛վ՝ լաւ. լիւն՝ լոյս. խլիլ՝ խլել. թիւղ սևիկ՝ թոյլ տալ։

Առը ալ սովորական ծագումը գաղտնի լեզուին յ-էն է. բայց երկու օրինակի մէջ գրուած է և և r ձայներուն տեղ։

խ=x

Օր. խո՛ճմիլ՝ խառնել. խմոռիլ՝ խառն. խխխկլ՝ խեղդել. վրխիմար՝ ոչխար. վախ՝ հմ.։

Սովորաբար կուգայ հին հայերէնի ի և ո ձայներէն. բայց նաև կը գտնենք գրուած օ ձայնէն վերջ, նոյնպէս հ-ի և ր-ի տեղ. առանց մասին երկրորդ գլխուն մէջ ընդարձակելու:

$$ծ = ts$$

Օր. ծնակիլ՝ ծածկել. ծնիգյնր՝ ծունգն. կո՛ծոմ՝ կաճան. սրհծ՝ կայծ ևլն:

Կանոնաւորապէս կը ծագի գրաբարի ծ և ձ ձայներէն. մնայն մէկ օրինակի մէջ (յիխձէ՝ եկեղեցի) գրուած է առը ց-ին տեղ.

$$կ = k$$

Օր. կնվնը՝ կամն. տկծոկե՝ կազին. ճնկաս՝ հմ. խակ՝ հմ.:

Ծագման սովորական աղբիւրը գրաբարի կ ձայնն է. երեք օրինակի մէջ մնայն գրուած է հին հայերէնի գ և ք ձայներուն տեղ.

$$կյ = ky$$

Համապատասխան կուրն է գյ հնչականին. արտասանել ճիշտ գրուածին պէս,

այն է եւրոպական k yodisé: Նոյն է Վա-
նեցոց, Ոլմեցոց և Ձոկեբու նոյն ձայնին
հետ: Ա յս ձայնը շատ յաճախադէպ չէ Ղա-
բաբալե բաբբառին մէջ. բառերու մէջն ու
վերջն ալ գոյութիւն չունի. այլ կը գտնուի
միայն երբ սկզբնաձայն և հետևեալ բառե-
րուն մէջ:

Կյալ՝ գալ. կյէնգյաս՝ գանգատ. կրնձո՛ւակ՝ գանձանակ. կյո՛ռնը՝ գառն. կյո՛րի՝ գալիլ. կյո՛ռունք՝ գարուն. կրվնգան՝ գաւազան. կյէվար՝ գաւաթ. կրրէզման՝ գերեզման. կրզիլ՝ գզել. կրխsor՝ գղթոց. կյէօղ, կյօղ՝ գոզ. կյուղնանալ՝ գոզանալ. կյում՝ գոմ. կյո՛ւմաշ՝ գոմէշ. կյօռալ՝ գոռալ. կրրիլ՝ գրել. կյէնալ՝ գգենուլ, ա-գանել. կյո՛պիւs՝ կապոյտ. կրպ-տիլ՝ կապուտանալ. կյո՛մբիւր՝ կարմիր:

Առնց մէջ կ յ կը համապատասխանէ գրաբարի գ և կ ձայներուն:

հ=h

Օր. հրմբռւրել՝ համարել. հակռնալ՝ համանալ. մհռւր՝ համար, վասն. հէռոռ՝ հեռի. մհռնկ՝ մահակ. հուղռւղ՝ ուղեղ ևլն:

Սովորաբար կը համապատասխանէ

գրաքարի հ-ին. շատ անգամ նրբ յատկանշում է ձայնարկի ձայնարկությունը (մէկ անգամ ալ արկածին մէջ)։ Երկու դէպքի մէջ ալ գրաքարի ա և յ ձայնեցուն տեղ. մէկ քանի ուրիշ բառերու մէջ ալ յ-ի տեղ։

ՀյԹԹև ch

Այս ձայնը կը պատահի միմիայն մէկ անգամ, այն է ըրհիւնակ՝ արեգակ բառին մէջ, որ կ'ըսուի նաև ըրհիյնակ. համապատասխան է աւոր գ-ին և կը հնչուի գերմաներէն ich բառին ch-ին պէս։

ծ=dz

բ, գ, դ (ինչպէս նաև ջ) ձայնեցուն նման՝ գրաքարի անհետացող ձայներէն մին է, որ կը ձգտի հետզհետէ ծ-ի վերածուելու։ Այս փոփոխութենէն առ այժմ ազատ մնացած, ինչպէս և ձ պարունակող ուրիշ բառերու ամբողջական ցուցային է հետևեալը.

Ա՛ևմոյ՝ աճառ։ ասևմոտխած կամ ասևմաստիկ՝ ասևմոտխած։ Աստխածմածխի՝ Ասատաճառ։ պրխիճ՝ բրևնճ։ կյոմիճ գանձ, երգ։ կղրևճամ՛ևսակ՝ գանձանանակ։ կխիճ՝ գևնճ։ բմևճր՝ հմ։ խո՛ևճխի՝ խառնճել։ խրևճրևմ՛համ՝ խառնճարահամ։ խևճէօր՝ խնճոր։ հօևճ կամ հէօևճ՝ հաւնճք։ հևճխի՝ հնճել։ փծխէևճ՝ փոխևնդ։ տևճ՝ հմ։ պրպմևճվէի՝ պատառնճել։ պոէևճ՝ պղևնճ։ պղևճէ՛ոէև՝ պղնճեղէն ատան, խաչևէն։

Առանց մէջ ճ յատաջ կուգայ դրաբարեն ը, ճ, դ ճայնեբէն։

ղ=gh

Օբ։ ղմրկէի՝ ուղարկել։ տկծոէև՝ կաղին։? հուղմուղ կամ հրղծ՝ ուղեղ։ ծրծո՛ոէի՝ ծխծաղել ևէն։

Ա յս ճայնը կը համապատասխանէ գրաբարեան ղ-ին։ Եւկու օրինակի մէջ գրաբարեն նգ, նկ խառնբէն կը ծագի։ այս օրինակներն են ցղևէի՝ ցնկնել։ կմղևէի՝ կանգնել։ Գրաբարեն ածուխ և սանդուխ բառերուն դէմ (որոնք կրնան նաև ղ-ով գրուիլ) Ղարաբաղեն բարբառն ունի մևճուղ, սմևղուղ։ Ղրբ։ կծէղևի՝ ճկոյթ (Թաղած գետնի բարբառով՝ ծկէյնը) եւ ատ է * ծկէյթևնը=ծկոյթ ճևէն։ Իսկ ինձ ան-

Ժանօթ է ղրղմնւն՝ կոճիկ (ածառ, հրճհրճուկ, խաղճախուղճ) բառին ժագումը։

Գրաբարի մէջ ձայնաւորով մը եւ յաջորդական ղ-ով սկսող բառերը կրնանցնելով իրենց նախաառ ձայնաւորը, Վարդանի բարբառին մէջ ղ-ով սկսող բառերու ստուար թիւ մը կը կազմեն։

Ծ=tch

Գրաբարի ճ եւ ջ ձայներուն կը համապատասխանէ. օր. ճմկաս՝ հմ. ճոնջ՝ ճանճ. ճիճի՝ ճճի. ճիւր՝ ջուր. ճօրէ՝ ջորի. ճրճիխել՝ ջախջախել։ Բայց երկու դէպքի մէջ ղրուաճ է ջ ձայնին տեղ. այն է վրէխճար՝ ոչխար. փսխճիլ՝ փսխել։

Մ՝=m

Առհասարակ գրաբարի մ-լին կը համապատասխանէ. օր. մ՝ոմոռ՝ մարմար. մրէծծ՝ մեծ. մաշկ՝ մէջք. մնանիլ՝ մտանել. կմոռնջ՝ կամուրջ։ Մ՝քանի տեղ ն-ի փոխարէն ղրուաճ է. ուրիշ տեղեր ևս թարմատար է։

J=y

Այս տառը միշտ պէտք է նեղ եւրոպական y (= գերմ. j) կարդալ, ինչպէս էր հին հայերէնի յ ձայնը և ո՛չ բնաւ հ. օր. յհ՝ եթ, յեթ. յոհ՝ յղի (կարդա՛ երդի, եհե և‌ այլն):

Այս ձայնը մի քանի ձևերով երևան կուգայ Ղարաբաղի բարբառին մէջ. նախ նեղ մասն էյ, օյ, իյ երկբարբառներուն՝ որոնց մասին խօսած ենք արդէն. երկրորդ նեղ բաժան մասն գյ, ֆյ, կյ ձայներուն՝ որոնց վրայ նմանապէս տես նրբենց կարգին. Ասոնցմէ դուրս գտնուած դէպքերուն յ բնկերացած է միշտ յաջորդական ե ձայնաւորով. չորս դէպքի մէջ ալ ր ձայնով. այսպէս՝ յոհ՝ յղի. յրա՝ վերայ, ի վերայ. յրդի՝ եղան. յրկի՝ երէկ. որոնց գոնէ վերջի երեքը * յհրա, *յհդի, *յհրկի նախաձևէ մը ածանցուած են հարևաւ, ինչպէս կը ցուցնեն Ղրբ. յհր՝ վեր, ի վեր (տիւր ձևին մէջ պահուած) և հայ. վերայ, եղան, երէկ համապատասխան ձևերը: Այս դէպքը նոյն է և մեկնութեան ճանապարհը կը բանայ հին հայերէնի նախատառ և ձայնին արդի գրական լեզուներուն մէջ յհ ձևին վերածուելուն. մանաւանդ երբ նկատենք թէ Ղարաբաղի յհ ունեցող 17 օրինակ-

ներսուն մէջ միայն մէկն է որ բառի մէջ կը գտնուի, նաև միւս բոլորն ալ սկզբնատառ են: Աստր վրայ աւելի ընդարձակ տես Բ. գլուխ Ե:

Այդ չ պարունակող բառերն են. ան-յեր՝ աչուը (հնչել ա՛չ թէ նոր աչ—եր, նորև վաւերուկ յ-ով, այլ պարզապէս ան—յեր). չ-ոնդկեցի՝ աղաւնի. չեխ՝ ապտ. չէժիլ՝ արժել. չե՝ յետ. չեղ՝ նոր. չէշիլ՝ հայել, աշել, աչել. չէզնը՝ եղն. չէիծէ՝ եկեղեցի. չէտր՝ յետոյ. չա՝ եւ. չէրիսկ՝ եպիսկոպոս. չէրկզ՝ եր-կէկ. չէրգիմէ՝ երկինք. չէրգիր՝ երկիր. տիչէր՝ ե վեր, վեր. չէիանիլ՝ յաղթել:

Կը տեսնուի թէ յ առանց մէջ կը հա-մապատասխանէ գրաբարի յ, վ ձայներուն. նոյնպէս թէ գրբ. ե, յ, ա ձևերուն սկիզբը կը գրուի:

Ն—Ռ

Օր. մնունդ՝ մատնութիւն, մատնա-շուն՝. մնաք՝ նման. նրնդիլ՝ ննջել ևլն:

Ղարաբաղի և ձայնը կը համապատաս-խանէ գրաբարի և, ս ձայներուն, է նաև Թարմանոսի:

շ=sh

Օր. շօճ՝ շուն. շիւրեփ՝ շեբեվ. փոշ՝ վուշ. ճիշարք՝ նշխարք ևլն:

Կը համապատասխանէ գրաբարի ս-ին երբեմն նաև յ, ջ ձայնեբուն. կամ թ՝ թուշ, թուրծ. շլլիւր՝ շլոր, սալոշիմ՝ սեամ քաւեբուն վրայ յեփոյ:

չ=tchh

Կը համապատասխանէ գրաբարի չ և ջ ձայնեբուն. կամ ճ-ի տեղ յ ունին Ղրբ. իչիմ՝ կճեպ, կեղև և չխմարակ՝ ճախարակ (վերջինս թուրքերէնի ազդեցութեամբ). Օր. չո՛միլ՝ չամիչ. չոշկ՝ չմուշկ. չեօրէ՝ չորս. ճրմո՛ճչիլ՝ ճանաչել:

d=թ

Գրաբարի պ, բայց նաև բ ձայնին տեղ դրուած է. օր. փափուրէլ՝ ապապաբել. պէժիլ՝ բաժին. պնապրէ՝ պար. պին կամ պինի՝ բահ. պնուժուժ՝ բժոժ (շերամի). կապ՝ կապ:

ջ=j

Վերն բառերու թէ դրաբարի ջ ձայնը

Ղարաբաղի բարբառին մէջ հետզհետէ խուլ-նալու ձգտելով, իր թիւը շատ նուազած է։ Եզած օրինակներն են. ակնջուզ՝ ականջ. տսեխ-ջան՝ աստեղան. պէկնջոր՝ բանջար. հէրեկնջ՝ ե-րինջ. թրթրնջիկ՝ թրթնջուկ. խնձկան՝ խոնջան. խոխնջալ՝ խրխնջել ձիու. կմոմունջ՝ կա-մուրջ. ղրնջիւր՝ ինճիւն (թուրքերէնի ազ-դեցութեամբ). փօնչ՝ վսեմ. ճոնչ՝ ճանճ. վղրմաճոնչ՝ մեղրաճանճ, մեղու. ճիկնջէխ՝ օրօ-րան (=հին հայերէնի ճօճք ?). նմհանչ՝ նա-հանջ տալ. նմարհնչ՝ հմ. նրնջիլ՝ ննջել. օնչ՝ ծուխ, մուր (=միջին հայ. ունչ). պատում-ջան՝ պատմնջան։

Առանց բուրբին մէջ՝ չ որ ռնգավանկի մեան կը յաջորդէ (բացի տսեխջան բառէն), կը համապատասխանէ հին հայերէնի չ և ճ ձայներուն։

ո=ՍՐ

Կը համապատասխանէ սովորաբար հին հայերէնի ո ձայնին, բայց մանաւոր դէպ-քերու մէջ նաև ր-ի տեղ դրուած է։ Օր. ֆնոակ՝ քուռակ վրէնկուռ՝ ոսկր. ծառ՝ հմ. ղոհան՝ ռեհան ևայն։

ս=s

Կը համապատասխանէ գրաբարի ս-ին։

Օր. սիտուն՝ սիսեռն. արէտս՝ սիրտ. վարս՝ վարտ, մազ ևլն։ Երկու օրինակի մէջ նաև ց և ծ ձայնեբուն. յանհ՝ լցուցանել, լցնել. ծնանկի՝ ծառիլել։

վ=v

Ղարաբաղի վ ձայնը կը համապատասխանէ գրաբարի վ, հ, մ, պ բաղաձայնեբուն, կը գտնուի աւ, եւ, իւ, ով երկբարբառնեբուն, ինչպէս և բաղաձայն ու-ի ձևափոխութեանց մէջ. նոյնպէս նաև կը գրուի հին հայերէնի ո ձայնով սկսող բառերուն սկիզբը. Որոնց մասին տես յետոյ։

ш=t

Սովորաբար կը համապատասխանէ գրաբարի տ և դ ձայնեբուն, բայց նաև թ, ինչպէս և կ կամ պ ձայնեբուն, մի քանի մասնաւոր դէպքերու մէջ. մէկ անգամ նաև թարմատար է (տկծոհի կամ կտծոհի՝ կաղին)։ Օր. յիտը՝ յետոյ. տիւս՝ ի դուրս, արտաքս, դուրս. խոս՝ խոտ. պտնտի՝ պատառել, վտթաթել։

ր=r

ր ձայնը կը համապատասխանէ գրաբարի մեծ ր ձայնին. թէև այս վերջինը կընայ վերածուիլ նաև ռ-ի, բայց հակառակը տեղի չկրնար ունենալ. բացի զրոյց՝ ծագելացող բառէն՝ որ այս մասին մեակ բացառութիւնն է: Այս բառն ալ Թարգմ. գիրքի բարբառով կը հնչուի զրրոյց՝ զրրոյցի համ պարզապէս զո՛րրաս:

ր է նաև թարգմաւոր:

ր ձայնին օրինակները.—*ծրրիկ*՝ օրհնել. *ղրծոց* կամ *ղրմոց*՝ օրօրոց. *կռպրդ*՝ կուպրդ. *ռէխ*՝ երախ, բերան (անարգական բառ. կը ֆր. gueul):

ց=tzh

Կը համապատասխանէ գրաբարի ց, ձ, ծ, երբեմն նաև ս ձայնեբուն: Օր. *ցors*՝ ցուրտ. *ցէց*՝ ցնց. *փօցի*՝ փոցխ. *պէց*՝ բաց. *պըցրմանալ*՝ բարձրանալ ևլն:

փ=ph

Սոյն ձայնը կը պանեինք գաւառական հա-

յերէնին մէջ ա և բ ձայնեբուն միջև: Օր. *փորի*՝

վըփաւը՝ իօրի՝ ևաւի. ւօրի՝ ւաւըը. վրդխնդաձ՝ քաբեհենդաձ։

ը=kh

Գրաքարի խ, գ և կ ձայնեբուն, և մէկ անգամ ալ բ-ին կը համապատասխանէ. օր. խշհր՝ գնչեը. խնարհ՝ քամի. խոռնաւուձ՝ քառասուն. հո՛խ՝ ապի ևչն։

ըյ=khy

Կապմուած նոյն ձևով՝ ինչպէս գյ, կյ ձայները. այն է եւրոպական kh yodisé կոչուածը. Վանեցոց, Ոզմեցոց, Զակեբու ևչն նոյն խյ ձայնն է՝ որ Ղարաքաղի բարբառին մէջ կը գտնուի։

կրէոհյ՝ կեռնը, աաամն, ակռայ. ձրդնմդհյնիվ՝ ապնը (ճկղմ+ապնը). ինիյօնհլ՝ առնուլ, ցինքն առնուլ. ըրխիյնակ կամ ըրհիյնակ՝ արեգակ. յհրգինիվ՝ երկինք. հխյ՝ էգ. բրհխյ՝ թրնը, քանոը. հնիյը՝ ինքն. խդհյնիվ՝ նստիլ. ծմխյհլ՝ ծագել. կմրոխյ՝ կարագ. խյնչհր՝ կնճիթ, աուսամ (թրքերէնի սպեցուԹեամբ). հրսմնհյնիվ՝ հարսանիք. ծիխյ՝ ամուր, ճկտ. հհրիխյ՝ հերնը, բաւական. ճրհրմխյ՝ ճրագ. մմրոխյ՝ ամպ, յարդանոց. ծրհնիվ՝ օրէնք. տմխյհր՝

տասը. վհոյ՝ վէց. պատմուհոյ՝ պատասխան. հնչհոյ՝ տուքսաղ.

Առանց մէջ ի կը համապատասխանէ գրաբարի ի, գ, (և կ) ձայնեբուն.

ԳԼՈՒԽ Բ.

ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Lautlehre)

Հին հայերէնի ձայները Ղարաբաղի բարբառին մէջ կը կրեն հետևեալ ձայնական փոխոխութիւնները:

1. *Ձայնաւորներուն փոխոխութիւնը.*

Իւրաքանչիւր ձայնաւորի մանրամասնութիւններուն անցնելէ առաջ՝ հարկաւոր է մեզ ընել ընդհանուր և համառօտ տեսութիւն մը Ղարաբաղի բարբառին շեշտադրութեան նկատմամբ, այս մասին մեր ընելիք ընդարձակագոյն քննութիւնները վերապահելով Քերականութեան բաժնին:

1. Ղարաբաղի բարբառին սովորական շեշտը կը գտնուի վերջընթեր վանկին վրայ.

օր. հմևևեր՝ անեը. էրիլ՝ այրել. խոստովմնվալ՝ խոստովանուել. ցրցհոնգակ՝ ծխծեռնակ. ըլչղակ՝ կաչաղակ. մնևմշոշ՝ մատնաշուրթն. վրևվրէլ՝ մլաւել ևլն։

2. Ղարաբաղի բարբառին մէջ ամէն ձայնաւոր որ շեշտէ առաջ կը գտնուի, կը ջնջուի կամ ը-ի կը վերածուի. այս հանդիպումը կարող է լինել բնական, ինչպէս ըղնչանիլ կամ ղնչանիլ բառին մէջ (= ապաչանք) և կամ ածանցմամբ ու հոլովմամբ առաջացած. օր. մղօրկ. բայց սեռ. ըղնօրկի, բայը՝ ըղնօրհլ ևլն ևլն։

Այս երկու օրէնքները Ղարաբաղի բարբառին բովանդակ ձայնական դրութեան վրայ ահռելապէս կ'ներգործեն. ինչպէս որ մեր այս ընդհանուր տեսութենէն վերջ՝ յաջորդ մանրամասնութեանց մէջ որոշ կերպով պիտի տեսնենք։

Ա.

1. Գրաբարի մնավանդ բառերու շեշտեալ ա-ը Ղարաբաղի բարբառին մէջ անվտանգ կը մնայ. օր. մզկ՝ ածգ. մակը = գըբանկն (աչք), պահուած մնայն Ղ-ըբ. մակը տալ՝ «այցելել» ոճին մէջ. խաղ՝ խաղ. խմոցը՝

Խատն. բանիդ՝ Թանգ. բանիդր՝ Թանձր ևլն։

2. Գրաբարի բազմավանկ բառերուն շեշտառ ա-ը՝ շեշտի վրայադրութեամբ կը վերածուի *ա*։ *Օր. Աշխատ՝ Խշիան՝ Եշխան. ապիտր՝ աշխատր. պէղարճ՝ բաղձալ. թողուրան՝ ազօթարան. կրնձամ՝ նակ՝ գանձանակ. խոռված՝ խորոված ևլն։*

3. Անէն բառի մէջ շեշտէ առաջ գտնուած անշեշտ ա-ը Վարդանի բարբառին մէջ կը գտնայ շեշտառ *ա*-ի *Օր. ազնիվ՝ ազնիւ. հանիր՝ անէր. հանիճ՝ անիճ. առտանա՝ մատանի. ախտրուել՝ մխիթարել ևլ ևն։*

4. Գրաբարի նախ քան շեշտառ վանէն առաջ գտնուած բոլոր անշեշտ ա-երը (ուրկէ խօսքով այն ա-երը՝ որոնք Վարդանի բարբառին մէջ շեշտէն անմիջապէս և առէլն առաջ կը գտնուին) կը վերածուին անշեշտ *ը*-ի։ *Օր. ըզնալ՝ ազատել. հրէշտակ՝ ալեւոր. ըզնական՝ ազգական. ըզնչալիք՝ ազատանք. ըզօրհնան՝ ազօթարան. ըզծրել՝ ազօթել. հրանգիլ՝ ամաչել. ըխշնալ՝ աշխատել. ըշխատակ՝ աչքատակ. ըտնկիլ՝ առաջին. ըրնծել՝ արժանել. ըրկնցում՝ արեգակ. ըտնանալիք՝ արհամարհանք. պրծկիլ՝ բաժանել. վրդկնցում՝ բա-*

բեկենդան. պրպրանալ՝ քաշքշանալ. կրվպգան՝ դաւադան. ուխտնանալ՝ եօթանաւուն. ըմբռնաստակ՝ նապաստակ. արկնավարք՝ աղկաւագ. կրբղրկօն՝ կաթուղիկոս ևն ևն։

5. *Կենայ պատահիլ երբեմն որ շեշտադրութեան կանոնը չգործադրուի Ղարաբաղի բարբառին մէջ. և դառնը վոհանակ յարուշեշտի վերածուելու, մնան շեշտելու. բայց այս պարագային 4-րդ կանոնը դարձեալ անխախտ կը մնայ. այս մասին եղած բոլոր օրինականները պիտի յիշենք շեշտադրութեան բաժնին մէջ. առ այժմ դնենք մի քանի օրինականեր. հրնցրնիէ՝ անցանել. ըշկրկնպրէ՝ աչքակապ. խրրկիօն՝ հարբուխ։—Նոյնպէս են նաև մրհար՝ հատոր, վատն (վրկ. *հրևար՝ որմէ շրջեալ է). մրհակ՝ մահակ. կղպտիլ՝ կապուտանալ ևլն. որոնք կը հակասեն վերի 3-րդ կանոնին. բայց համաձայն են ձայնաւորների անկման օրէնքին. այս ձևերն ըստ 3-րդ օրինի պիտի ըլլային մրհար, մրհակ, կղպտիլ ևլն։*

6. *Շեշտէ առաջ գտնուած ձայնաւորների անկման օրէնքը այնչափ զօրեղ է որ մինչև նաև միաւանկ և երկուանկ բառերուն (ուղղական—հայցական հոլովին մէջ) շեշտեալ ա-ն ր-ն կը վերածուի մեա հոլովներուն*

մէջ՝ երբ բառն ընդարձակուելով և ըստ այսմ շեշտը տեղափոխուելով, այդ ա-ը շեշտ-
ուէ առաջ գտնուի։ Օր. Ա՛ստուծ, Աստ՛ուծու, Ա՛կուի՝ Ցակոբ, Հիւփաւ՝ Ցակոբով. փող՝ փայտ. փեղքաւ՝ փայտերով. անձուղ՝ ածուխ. նձո՛ւղան՝ ածուխէն. ամաո՝ ամա՛ն. նմանաւ՝ ամանո՛վ։

7. Դարձեալ այս օրէնքին պատճառա-
մի քանի բառերու նախ քան շեշտեալ վան-
կի անշեշտ ա-երը բոլորովին կը ջնջուին, վա-
նական ը-ի վերածուելու. այս բառերն են
զօխ՝ ազոխ. նւոյի՝ անալէ, անլէ. ծխի՝ ածելի.
ղմչաւիվ (կայ նաև ղոմչաւիվ)՝ ազաչանք. փսպմ-
րել՝ ապսպարել. փրսպմրաւիվ՝ ապսպրանք.
խնցի՝ աքացի. ղօնեգյ, թէև աւելի գործածա-
կանն է յեղօնեգյ՝ ազաւնի։ Ուշիշ է նօթրէ՝ որ
կրնայ գրաբարի նօթի ձևէն եկած ըլլալ ազ-
գաւիլ (և ոչ անօթի ձևէն)։

8. Առը և վերի 4-րդ օրէնքին հակա-
ռակ՝ երբ մը եռավանկ և քառավանկ բա-
ռերու ա-ը փոխանակ ը-ի վերածուելու, կը
մնայ անփոփոխ։ Այդ բառերը հետևեալ-
ներն են.—ազկակմն՝ ազգական. աղօթարան
կամ ըղօթարան՝ աղօթարան. աբաշխմրել (կայ
նաև ուղղագոյն ձևը—ըրբշխմրել)՝ ապաշխա-

*ըել. պարթնաանիմ կամ պրմբնաանիմ բամբա-
ռանք. պարհկան՝ բարեկամ. թոմնվրեր կամ
բմնվօր՝ թագաւոր. պաղարնմյ՝ պատարագ.
պաւոնմջնև կամ պաւրմջնև՝ պատինջան. սար-
հնվարմ կամ արկնվարմ՝ սարկաւագ. արդնևա
կամ սաղնևա՝ սատանայ. սեծղակ կամ ըեծղակ՝
յաջողակ. դադաւսնև՝ գաւառան. սոուսնր՝
հմ. արհուշհամ՝ աքըշում. անիծել կամ ըևիծիլ՝
անիծել. հանիբրել (կայ նաև ուղղագոյնը
հրանիբրիլ)՝ համբերել. անիրես՝ աներես. անհաս-
վամ՝ անասուածք. Աստվածմամբ՝ Աստուա-
ծամբն:*

Այս բառերուն մեծ մասը կրօնական կամ ուսումնական բառեր լինելով ա-ի փոփոխութիւնը տեղի չէ ունեցած. պատինջան և աքըշում բառերն ալ թրքականին պղծութեան են պարտական. իսկ աղօթարան, սարկաւագ, սատանայ, անիծել և ձևերը թէ՛ ա-ով և թէ ը-ով գործածական են, ինչ որ կը ցուցնէ թէ ա-ով ձևերը գրականին պատճառաւ են, իսկ ը-ը յառաջ եկած է բնիկ Ղարաբաղի բարբառին մէջ:

9. *Ցայտնի է որ հին հայերէնի ձանձրել, հանարել և այլ այսպիսի եռավանկ (մէջին վանկը ա-ով) բայերը երկու տեսակ փոփո-*

խուխին կրած են նեղկաց հայ բարբառներու մէջ. արևելեանին մէջ առանք անվտանգ պահած են. իսկ արևմտեանին մէջ մինչեւ ա-ը կորնցուցած և դարձած են ճանչել, համրել ևլն: Տեսանք նաև վեցը (թիւ 4) թէ Ղարաբաղի բարբառին (այսպէս և Զօլվեբէնի) մէջ առնց առաջին վանկի ձայնաւորը միայն կը ջնջուի, իսկ երկրորդը և երրորդը կը մնան անվտանգ, միայն շեշտը տեղափոխուելով: Սակայն Ղարաբաղի անձ բայերը արևելեանին, ինչպէս և Ղարաբաղի բարբառին մէջ ճիշտ նոյն վտանգին կրած են, ինչ որ արևմտեանին մէջ: Այդ բառերն են. ունիմ՝ մոռնալ, մոնել. տրհևալ՝ տեսանել, տեսնել. մրհոնիմ՝ մեռնել. հրցնիմ (երկու վանկով)՝ հարցանել, հարցընել (երեք վանկով). նի-հրանիմ՝ հասանել, հասնիլ. փանիմ՝ բուսանել, բուսնիլ. պլ. փանիլ. հրնցրնիմ՝ անցանել, անցնիլ (երկավանկ). կծգիմ, կծժգիմ՝ հոճակել. պլ. գօժգիլ. յիշենք նաև ղանիմ՝ ընուլ, ցուցանել, և կրպտիմ՝ կապուտանալ.

10. Այս բոլորէն զատ երկու գլխաւոր վտանգ կը կրէ ա-ը Ղարաբաղի բարբառին մէջ. վտանգներ՝ որոնք բացարձակ և կանոնաւոր չեն և որոնց համար

անկասելի եղաւ ինձ ընդհանուր օրէնք մը գտնել, բացի մի քանի մասնական և թերևս ոչ բոլորովին վերջնական օրէնքներէ։ Այս փոփոխութիւնները են ա-ին է և տ ձայնեսուն վերածուելը, ինչ որ (մասնաւանդ վերջինը) յատուկ է ուրիշ բարբառներու ալ. այսպէս օրինակ Ագուլիսի, Վանի, Խարբերդի, Ուլնիոյ ևլն։ Ագուլեցոց բարբառին քննութեան մէջ Ս. Սարգսեան նմանապէս քննելով այն երևոյթը Զոկերու լեզուին մէջ, չէ գտած բացարձակ օրէնք մը, այլ մի քանի մասնաւոր պարագաներ, թէև միւս վերը յիշուած բարբառներուն վրայ առանձին ուսումնասիրութիւնները պատրաստուած չեն դեռ, սակայն յընդհանուրն դիտելով կարելի է ըսել թէ նոյն անկանոնութիւնն ունին նաև յիշեալ բարբառները։

Լաւ կը լինէր անշուշտ եթէ բոլոր բարբառներու ա-ով բառերը հաւաքուէին ու հրատարակուէին, որոնց համեմատութեամբ կարելի լինէր թերևս վերջնական եզրակացութիւն մը հանել։

Ղարաբաղի բարբառին մէջ ա-է յառաջացած ո ունեցող բառերուն ցանկը հետեւեալն է.

հո՛ֆի՝ ապե՛ս.
ո՛ՀկիՀ՝ ասպե՛ն, գոհա՛ս.
հունդ՝ անդ, տա՛ս.
ո՛ՀգիւՀ՝ կողմ (անկեա՛ն բառէն).
ասիլցմա՛Հ՝ առաջմա՛ն.
հո՛րվիլ՝ ապրեցնա՛լ.
ո՛րթոր՝ արդա՛ր.
ո՛ժիլկամ յՀժիլ՝ արժե՛լ.
ո՛րիւՀ՝ արևե՛ն,
ո՛րծիվ(Թաղատ գեա՛զ)կամ մուծիլ՝ արծե՛լ.
* պՀՀիցոր՝ քանջա՛ս.
* կՀզոր՝ գազա՛ր:
կյՀՀիգյոս (Թաղատ գեա՛զ) կամ կյՀՀիգյաս՝ գանդատ.
կյոՀՀ՝ գանձ, ևրգ.
կըՀՀմո՛ՀաւկՀ գանձանակ.
կյո՛ռՀր՝ գառն.
կյո՛րի՝ գարի.
կյո՛րուՀՀ՝ գարուն.
տաս՝ գա՛ս.
տՀոկ՝ կամ տՀակ՝ գմա՛կ.
ո՛րոգ (Թաղատ գեա՛զ) կամ մուազ՝ երա՛զ.
*գոՀիգյ՝գանգ, գանգա՛կ.
թո՛ՀաւկՀ՝ Թանա՛ք.
թոՀիգյ կամ թաՀիգյ՝Թանգ.
թոռ՝ Թա՛ռ.
ժՀռոՀիգյ՝ ժառանգ.

---

* Երկու ցանկերուն մէջ ալ առաղաւիշ ուՀնկ-ցող բառերը կրնան թրխկաՀՀիկՀ ազդուած ըլլալ, քան որուն ասոնք թրեՀրՀին մէջ ևս կը գտնուին:

լաց՝ լալ.
լայլ՝ լայլ.
խաղ՝ խաղալ.
խո՛խոչ՝ խոչոտալ.
խո՛նձիլ՝ խոնձել.
խրնձրևո՛հաս՝ խոնձրատհաս.
զրզո՛ղրող՝ ծաղկապաշտ.
ծրծո՛ղել՝ ծլծլալ.
կո՛զմիլ՝ կապմել.
կոթ՝ կաթ մի, կաթիլ.
կո՛թիլ՝ կաթել, կայլակել.
կոլ՝ կալ.
կո՛ծոև կամ կնճռև՝ կռճռան.
կո՛ծոկ՝ կայծակ.
կյո՛սիս՝ կապույտ.
կնարոհյ՝ կարապ.
կյո՛մրիտ՝ կարմիր.
հոգ՝ հագ.
հո՛ղիլ՝ հալել.
հո՛շտվիլ՝ հաշտվել.
հո՛րիտ՝ հարիւր.
ճրևո՛ևչիլ՝ ճոռոչել.
ճոևզյ՝ ճանկ.
ճոևչ՝ ճանճ.
ճոշ՝ ճաշ.
մոգ՝ մագ.
* մնարոհյ՝ մարապ.
* մո՛ռմոռ՝ մարմար.
* ևո՛րգիզ՝ նարկէս.
շէքոթ կամ շէքէր՝ շաբաթ.

շէլոկ կամ շէլակ՝ շալակ.
ժամ՝ շարժ, երկարաշարժ.
* շո՛ֆար՝ շաքար.
կո՛րփոր՝ ուրբաթ.
չո՛ւխիչ կամ չանկիչ, չամրէչ՝ չամիչ.
տէտրակ կամ տետրակ՝ տառրակ.
ո՛դո կամ ադա՝ այդ տղայ.
տունճ կամ տանճ հմ.

Ա-է յատաջացած է ունեցող բառե-
րուն ցանկին ալ հետևեալն է.

պրժէնիլ՝ բաժանել.
պէժիլ՝ բաժին.
պէկլա՝ բակլայ.
պէղարճ՝ բաղարջ.
պէմբակ՝ բամբակ.
պէն՝ բան, իր.
պէնալ՝ բանալ.
* պէնջոր՝ բանջար.
պէռնէլ՝ բառնալ [1]).
պէրակ՝ բարակ, նուրբ.
պէրգ՝ բարձ.
պէրճար՝ բարձր.
պէգ՝ բայց.
* կէզ՝ գազ (չափը).
* կէզոր՝ գազար.
կյէնգյաս՝ գանգատ.
տէնակ՝ գանակ.

---

1) Պէռնէլ յատաջ եկած է պէռնը՝ բեռն բառին «հատապտուղ» իմաստը:

ցԿոսվ՝ դառաւ, դարձաւ.
ցԿրցակ՝ դաւառակ.
ցԿրմանի՝ դարման.
տեփ՝ դաւէ.
րեխ՝ երաւ.
զԿտեզյ՝ զաւակ.
զԿրթուն՝ զարթաւն.
ժեմ՝ ժամ, ժաւմ.
լԿփիլ՝ լաւնել.
ֆչԿողակ՝ կաչաղակ.
գյըրԿգի՝ կեւրակէ.
ծԿխե՝ ձաւ.
շԿքեր կամ շԿրոք՝ շաբաթ.
շԿլոկ կամ շԿլակ՝ շալակ.
հórkfյ՝ ուրբաթ.
պúsեևifյ՝ պատանք.
ճԿղաց՝ Ջաղացք.
տԿsրակ՝ տատրակ.
փúծեղիր կամ փúծրղիր՝ վայծաղն.

11. Ա և է ձայնեբուս մասին մեր վերև անդամ մասնական օրէնքները երկու տեսակ են. առաջին՝ արգելիչ, երկրորդ՝ յառաջ բերող պատճառները:

Ա.—*Արգելիչ պատճառներ.*—Երբ մը ձայնեը գտնուելով բառի մը մէջ՝ արգելք կը լինին որ նոյն բառին մէջ գտնուած ա ձայնը վերածուի ո կամ է ձայնեբուն:

Արգելիչ ձայնեըն են.

1. ու ո՝ ինչ որ ալ ըլլայ ասոնց ծա-
դումը: Ազգակցական բարբառին քառասունին
մէջ 80-ի չափ բառեր կան՝ որոնք ո կամ ու
ձայնը պարունակելնուն պատճառաւ երեսնց
ա-ին եղանակը չեն վոխած. օր. փնփուկ, ար-
ևունգ, սևուռ և այլն: Փոխադարձաբար մեր վերև
մէջ բերած երկու ցուցակներուն մէջ չկան
ու, ո ունեցող բառեր:

Բացառութիւն են միայն կո՛ռուիլ՝ գա-
լուն. հնչեղ՝ ուրագ. գէրուն՝ զարթուն:

2. րե.—Ասոր համար ալ 30 օրինակ-
ները կան. ինչպէս՝ իրևնմէ՝ խնամի. ծրէրան՝
ծերան. մրեևէշակ՝ մանիշակ.

Բացառութիւն չկայ:

3. իա—Այս ձայնէն անմիջապէս առաջ
գտնուող ա-ելն ալ երեսնց եղանդը չեն վո-
խեր. օր ֆնցախ. սիսկէր՝ եղբայր. մսիծ՝ մաղձ.
փարախ՝ վերթականերու սենեակ (հին փարախ
բառէն). այսպէս 30-ի չափ բառեր:

Բացառութիւն են միայն ծէխ՝ ձախ-
յէխ՝ ազատ, կեղտ. յէխնէլ՝ յաղթել.

4. ո ձայնն ևս կը թուի արդելիչ երեսն
մերձաւոր ա-երուն վոխնոխութեան. այսպէս
է քանէ աւելի բառերու մէջ. ինչ. մսոցող՝
ատաղ, գատաղ. մոսի՝ առէջ. գոմնցի՝

բառաչել, պնդաձ պառաւ. ժնտոնգյ՝ ժառանգ. մսխած՝ աոխծ. Բացառութիւն են մո՛ռմոռ, զլոզո՛ոբոո, բոո, կյո՛ռնլը, տհոավ: Իակ պհռնհլ՝ ինչպէս որ վերը բացատրուած է, պհռնլը՝ բեռն բառէն յառաջ եկած է:

Բ.—Յառաջ բերող պատճառներ.—Ուրիշ խումբ մը ձայներ ալ գտնուելով բառի մը մէջ պատճառ կը լինին որ նոյն բառին մէջ գտնուած ա ձայնը վերածուի ո կամ է ձայնեան:

Այսպէս են. 1. ո, ու ձայները՝ ինչ ալ որ ըլլայ առնց ծագումը. օրինակներն են՝ հվիռ՝ աւել. պհցիւր՝ բարձր. գիւրտո՝ գուլպայ. ինանլգյո՛՝ լուսնակայ, լուսին. կյո՛պիտ՝ կապոյտ. կյո՛մբիւր՝ կարմիր. հո՛րիւր՝ հարիւր. հóրվտոբ՝ ուրբաթ. ո՛ւզիւն՝ անկիւն, կոմ. ո՛րիւն՝ արիւն: Սակայն առնց հակառակ կան ա՛սիւծ՝ հմ. ա՛խպիւր՝ աղբիւր. Հւրաւն՝ երեան. արհւշիւմ՝ աբրշում. տոտհóոալ՝ դողդոջալ՝ որոնց առաջին երկուքին պատճառը ո և ու ձայներն են. իսկ Հւրաւն և տոտհóոալ համաբանութեան պատճառաւ չեն փոխուած:

2. Ր ձայնին անկումն ևս նախորդ ա-ին երանգը կը փոխէ. այսպէս են Հժաւն՝ արժան. ֆհժիլ կամ ֆհմիլ ատժել. ժոժ՝ շարժ, երկրա-

չարժ. սիկիր՝ բաղձալ. ճիղաց՝ ջնաղաց. կյո՛մբիր՝ կարմիր:

3. *ակ, ագ, ակ* և *մանաւանդ ագ, ան ձայնեբուն քով ալ ա կը վերածուի ո կամ է ձայնին. օրինակներն են՝ ո՛ակին՝ գոհար, անդին. ո՛ագիւն՝ անկիւն, կողմ. պա՛տիվ (նաև պա՛տանիվ)՝ պատանք. կէ՛ագյաս (նաև Թաղոտ գիւղի մէջ կյէ՛ագյոս)՝ գանգատ. ժա՛ռոնագ՝ ժառանգ. ճո՛նագ՝ ճանկ. զո՛նագ՝ զանկ. կյո՛նաձ՝ գանձ, երդ. տո՛նաձ կամ տա՛նաձ՝ հմ. խո՛նաձիլ՝ խանձիլ:*

Բացառութիւն է մի այն թա՛նագ՝ թանկ, վոխանակ ըլլալու թո՛նագ: Սակայն այս վերջին ձևն ալ Թաղոտ գիւղի մէջ աւելի գործածական է:

Վեր.—Առանցմէ դուրս կարելի էր նաև մի քանի ուրիշ օրէնքներ մէջ բերել, բայց չյուշեցինք զանոնք օրինակներու նուազութեան, ուրիշ խօսքով անոնց շատ սահմանափակութեան պատճառաւ: Վերը յիշուած ձևերուն մէջ կը պատահի երբեմն որ մի քանի օրէնքներ միասին գործեն. բայց այս բանը սովորաբար մէկին կամ միւսին արդելք չէ՛ինլը. օրինակ՝ ժառանգ բառին մէջ ագ վերջաձայնը ո կը պահանջէ. միւս կողմէ ո-ն՝ ա կը պահանջէ. եւևաքն

ալ կը գործադրուին: Պատմիմ բառին մէջ ա-եըը փոփոխութիւն չեն կրած, բայց եըը նոյնբառին վերջաւոր բաղաձայնը կը փափկանայ, օրէնքին համաձայն նաև ա-ն ո-ի կը վերածուի. Բոլոր առնք ուրիշ բան չեն ցուցներ սակայն, բայց եթէ մէջ բերուած օրէնքներուն ճշտութիւնը:

12. Ա ձայնին մինչև այսաեղ յիշուած փոփոխութիւնները Ղարաբաղի բարբառին համար ընդհանուր և սովորական են. բայց առանձին գրուբա կան նաև մի քանի մասնաւոր փոփոխութիւններ, հետևեալ կերպով:

1. ա=ի. այսպէս են պիհ՝ բահ. պիհիլ՝ բահել. (Գավխան բարբառով պոհ, պո՛հիլ). ի՛ժան՝ ալժան, աժան. վերջինը նաև Ժան. կ՚արթիլ կարդալ:

2. ա=ու. այսպէս են ա՛ւիգուն կամ ա՛ւիչուգ՝ ականջ (Պլ. ա՛ւիգաչ). ուռնա՛ւա կամ ա՛ռնա՝ մառանել. զի՛մուչ՝ զոքանչ (Պլ. զօ՛իմաւիչ): Թաղատ գիւղի բարբառով՝ ուղնա՛ւա՝ առանձայ, որ ուրիշ տեղ աղնա՛ւա կամ աղնա՛ւ ձևով պահուած է:

3. ա մեակ օրինաւոր մը մէջ կը դառնայ ը՛. այն է ա՛մրուն՝ ամառն. բայց այս փոփոխութիւնը ո՛չ թէ ձայնաբանական է, այլ

նոնաւոր ըհ-ին նմանողութեամբ: Թաղոտ գետի բարբառին մէջ այսպիսի նմանողութիւն չկայ և կ'ըսուի ամատր:

4. ա=օ. այս վոփոխութեան ենթակայ եզած են հետևեալ ձևերը. տկօղեն կամ կտօղեն՝ թէև առաջ հանգստանալ կայ կնոլորէ՝ կառնել. ֆնֆյօնել՝ գնել (այսինքն յիւրն առնուլ). խնօխա՝ եղեկայ, եղանկայ (=*ռնախա, *խնախա հնագոյն ձևերէն). նաև յղոյնի՝ եղան, եղկամանեայ հոսելն (Գորիս յիղան:)

5. ա=ko. մեակ օրինակի մը մէջ՝ որ է fpkoյ՝ գգալ, տարգալ: Թաղոտ գետի բարբառով կյկօրէ՝ գալն, որ այլուր կյո՛րի ձևն ունի. Գորիս նաև զֆնֆկօյ գոքանչ:

6. ա=իւ. նոյնպէս մեակ օրինակի մը մէջ. հմմտ. զիւրպնանալ (Գորիսի բարբառով զյրբաւո՛նալ)՝ զարթնուլ, արթննալ. թէև մեւս կողմէ կայ զէրբուն՝ զարթուն (Գորիս զյրբիւն).

7. ա=յէ. այս ձայնաւորափոխութեան ենթակայ են հետևեալ բառերը. յէղնէյգ՝ աղաւնի. յէխնէլ՝ յարթել (Պլ. էխրէլ). յէխ՝ աղա, ներզ. յէխտուտ՝ աղատա, ներզատա. յէժիլ (Թաղոտ գետ՝ ո՛ժիլ, Գորիս՝ ամժիլ)՝ ապրժել. յէշիլ՝ աչել, նայել (գետ. աշնել): Բոլոր այս ձևերուն մէջ յէ ձայնաւորափոխութիւնը բուն

ակնզբը կը դանուի. ուսան դժուար չէ ընդունել թէ ծագած ըլլայ նախատառը ե=է ձևէն. (հմմտ. հին հայերէնի ե-ով սկսող բառերուն առջի գրական յ= ստուգանութիւնը. օր. երեկ=յերեկ). ապա վերցնելով ձևերուն հնագոյն վիճակը կ'ըլլայ *հոմնէյգ, *հմնէկ, *հես, *հեսուս, *ժժիլ, *էշիլ: Ըստ այսմ յառաջ եկեր ձևերը կը պատկանին բուն ա=է ձայնափոխութեան:

8. ա=ը. այս ձայնաշրջութիւնը տեղի կ'ունենայ մեայն րին՝ երախ, բերան և փնջրոնիլ՝ փայծաղն բառերուն մէջ. այս ձևերն ալ գրծածական են Թաղատ գիւղի բարբառին մէջ. նակայլ ուրիշ և փնճռոնիլ: — Գրչեան բարբառով նաև տիրը՝ տապլ, որ այլուր տամբիր ձևն ունի:

Ե և Է

Ապահետև հին հայերէնի է և է ձայնները՝ ինչպէս ուրիշ շատ բարբառներու, նոյնպէս նաև Ղարաբաղի բարբառին մէջ մեծ մասով նոյն փոփոխութիւններուն են-թակայ եղած են, ուստի յարմար կը դատենք երկուքը միասին ներկայացնել: Դիւրութեան համար այս մասը կը բաժնենք չորս ստորաբաժանումներու՝ այսպէս.

Ա. և և Ւ շեշտի տեսակէտով.

Ա-ի մասին ինչ փոփոխութիւններ ու նկատեցինք վերը շեշտադրութեան տեսակէտով՝ նոյն փոփոխութիւններուն ենթակայ են նաև է և Ւ ձայները. Զանց առնելով խօսիլ մանրամասնօրէն այդ փոփոխութիւններուն վրայ, ինչ որ աւելորդ կրկնութիւն պիտի լինէր, բաւական կը համարենք միայն համառօտիւ յիշել զանոնք և մէջ բերել հարկաւոր օրինակները:

1. Գրաբարի միավանկ բառերուն մէջ է և Ւ ձայներուն շեշտն անփոփոխ մնացած, մինչև իսկ երբ նոյն բառը Ղարաբաղի բարբառին մէջ բազմավանկի է վերածուած: Օր. խԻժիլ՝ խէժ. վԻրի՝ վէգ. սԻրտ կամ սիրտ՝ սերմն. նվԻղ՝ նեղ. ԻՒ՝ էգ. յԻզիր՝եղն:

2. Բազմավանկ բառերու մէջ շեշտեալ է և Ւ վերածուած անշեշտի: Օր. մծáրել՝ մեծարել. ԵՒվիլ՝ աւել. շԻրԻփ՝ շերեփ. հáնԻր՝ աներ. ւáղվԻս՝ աղուէս:

3. Վերջավանկի շեշտը տեղափոխուած վերջընթերը է և Ւ ձայներուն վրայ. Օր. ֆԻնրԻ՝ քենի. կյուրԻզման՝ գերեզման. փրգԻդան՝ բարեկենդան. թրքԻռվԻ՝ թեյլթեղուկը (թաղթիչ):

4. Գրաբարն վեցբնթեր վանկէն առաջ պանուած բոլոր և և ձայնեըն՝ նոր անշեշտ ը-ի վերածուած: Օր. մծմնալ՝ մեծանալ. ղրուձմնլ՝ մեղրածանձ, մեղու. մծմրել՝ մեծարել. արկրհէվիլ՝ սերկևել. բրթրումբ՝ թերթերաւնք. կյըրէզման՝ պերեզման. ըրհւգիւ՝ (կայ նաև իւրհւգիւ)՝ երեկոյ. ըրհւռն՝ երեսուն. ըրվալ՝ երևալ. հրևէրակ՝ երանելի:

5. Փոխանակ յարաշեշտի բառերը մնացած շեշտելու, բայց դարձեալ անշեշտ և և ձ ընկած: Օր. իվըլևօրբ՝ աւետարբ. ցղևօց՝ պեղնուց. ղէ՝ լեզի. ղրա՝ (ի) վերայ. բրդէ ևամ դըրի՝ դէպի. բրբըրմնդէ (ինչ. * բրհռևակ)՝ թևթեռնիկ. ղրօվի՝ եղան:

6. Հոլովման և ածանցման ժամանակ և և ձայնեըն ընկած շեշտի պատճառաւ: Օր. ղզևէրավ՝ եղնեբով. արմրէրան՝ սերմերէ. մծմնալ՝ մեծանալ. ևղօրուն՝ նեղութիւն:

